

մանե՛ր որոշե՛լս»,— իմաստալից եզրակաց-  
նում է այս հաջողված գրքի հեղինակը: Նույն  
այդ սկզբունքներով էլ աշխատության հեղինակ-  
ը վերջին գլուխներում արժեքավորում է Մ.  
Նալբանդյանի և Դ. Դեմիրեյանի բնագրատա-  
կան և գրականագիտական վաստակը:

Վերստին ընդգծե՛նք. Ժ. Քալեբթարյանի ներ-  
կա աշխատությունը գրված է գիտականորեն՝  
մտաշեղի և ոճի իմաստով՝ հստակ լեզվով: Այն

իմի է քերում կուտակված խայտաբղետ նյութը,  
տարասն խոսքեր, համախմբում է դրանք և,  
նշմարիտ գիտության շահերից ելնելով, ստեղ-  
ծում է բնագրատության տեսության յուրատե-  
սակ համակարգ:

Սկսված է ազնիվ աշխատանք՝ հանուն գի-  
տական բնագրատության հեղինակության: Հար-  
կավոր է աչկացել...

Ս. ԱՔԱԼԲԱՆԿՅԱՆ

PARS TUĞLACI—Osmanlı Mimariğinde Batılılaşma Dönemi ve Balyan  
Allesi, İstanbul, 1981 (İnkılâp ve Aka) s. 352, fot., gr., res.

Քուրբխյան աշխատած հայ նշանավոր ար-  
վեստագետների գործին, մասնավորապես Պալ-  
յանների կերտած մանչելիքներին իրենց ուսում-  
նափրություններում անգրագարձել են Արշակ  
Չոպանյանը, Արմենակ Սազգյանը, Գառնիկ Ստե-  
փանյանը և ուրիշներ, դրանց մասին հաճախ է  
գրել պոլսահայ մամուլը, բայց վաղուց պահանջ  
էր զգացվում մի ամբողջական երկասիրության,  
ուր ամփոփված ու բնական լինեին Պալյանների  
բոլորածույրները:

1981 թ. Պոլսում քուրբխե՛ն լեզվով լույս է  
տեսել անվանի բառարանագիր և քուրբխյան  
հանրագիտարանների կազմող Բարսեղ Քուրբխ-  
յանի (Բարս Քուրբխյան) «Սումանյան ճարտարա-  
պետության արևմտահայեցած ժամանակաշր-  
ջանը և Պալյան ընտանիքը» աշխատությունը:  
Պոլսի XVIII—XIX դարերի փանի-փանի ճար-  
տարապետական կորագրեր են կերտել այս ըն-  
տանիքի անդամները: Տյոզը ստրայ, Դոլմա  
Բանչե, Լուսերթեյ մզկիթն ու պալատը, Չրա-  
դանի, Գյոթու կամ Քյուլյուֆուս, Ինյամուրի,  
Բեյլերթեյի, Այազադի, Իզմիրի արևոնի պա-  
լատներն ու այլ բազմաթիվ հուշակառույցներ,  
այսօր նիստահան են գրաստայիկներին և դեպի  
Պոլսի ձգում են: Այդ հրաշակեցողները փայ-  
լուն վկայություն են Պալյանների կառուցողա-  
կան հանձնարի ու իրենց վրա են կրում նրանց  
մտածողությունը:

Պալյաններին նվիրված ուսումնասիրությունն  
սկսվում է օսմանյան կայսրության ներկայիս  
տարածված ժամանակին աշխատած հայ ան-  
վանի ճարտարապետների վաստակի բուրգի  
նկարագրմամբ: Նշվում են փառաբանված Տր-  
դատ Անեզու, «Փռտ Սինանի» (Վարպետ Սի-  
նան), Եղիազար, Արզուման, Սարգիս, Եփրեմ,  
Ավագ և շատ ուրիշ «հայկաների» (ճարտարա-  
պետ) անունները, դեմքեր, որոնք բազմաթիվ  
կարևոր հուշարձաններ են կերտել սարքեր պա-  
րհում: Վերջիններիս շարքում իր արժանավոր  
տեղն է գրավում Պալյան ընտանիքը: Մտապա-

րապես հարյուր տարի Պալյան կամ Պալյան  
ընտանիքը սերնդից սերունդ է փոխանցել մուսու-  
ճարտարապետ-նկարչու ժառանգությունը:  
Պալյանները եղել են օսմանյան կայսրության  
ժամանակաշրջանի, այսպես կոչված՝ «հասսա»  
(արբանի) ճարտարապետներ:

Գրքի հեղինակի կողմից վեր հանված մտ  
երկարյա ժամանակահատվածի ճարտարապե-  
տությանը հատուկ է փառաբանական բնույթը  
և տիրապետող են բարոյական և ամպիր ոճի ձե-  
վերը: Բ. Քուրբխյանը պատկերում է բնական  
երկու ճարտար տարիների ճարտարապետության  
եկրոպական (հատկապես ֆրանսիական) շին-  
արվեստից ազդված լինելը, Կ. Պոլսի արտա-  
փուտ եվրոպականացումը: Գնդարվեստական այս  
իրականության մեջ նոր երևույթների արտացո-  
լումները եղան Պալյանները: Նրանք հանդես ե-  
կան բազմաթիվ նորամուծություններով, արմա-  
տապես փոխելով հին Բյուզանդիոնի դեմքը:  
Պալյանները Կ. Պոլսում կառուցեցին մի ճեղք  
թաղամաս, արբանի պալատներ, մզկիթներ,  
բաղնիքներ, գործարաններ, գործառույցներ, աշ-  
տարաններ, շրթաքեր և այլն: Նախկինում փայ-  
տաշեն հրդեհված կառույցների տեղում Պալյան-  
ները կերտեցին ամուր, փայլ շինքներ: Նրանց  
հետ է կապվում նաև գաճազան հուշարձանների  
բարեկարգումն ու բարենորոգումը:

Պալյանների կյանքի ու գործունեության ժա-  
մանակը համընկնում է սուլթաններ Մուստաֆա  
3-րդի, Արզուլ Համիդ 1-ինի, Մուստաֆա 4-րդի,  
Մանսուր 2-րդի, Արզուլ Մեհմեդի, Արզուլ Ազիզի,  
Մուրադ 5-րդի և Արզուլ Համիդ 2-րդի գահա-  
կալության մտայ շրջանին: Իրենց ստեղծագոր-  
ծությունների համար, նրանք գաճազան արտա-  
նություններ, պարզներ, շահաններ են ստա-  
ցել օսմանյան պետության ղեկավարներից: Այդ  
մասին գրապատը նե՛ք կազմում Պալյաններին  
ուրված հրամաններից, պատվոգրերից ու արտա-  
նագրերից, որոնք ներկայացված են գրքի վեր-  
ջում, առանձին հատվածով:

Քուրբխյանի գրքում առանձին գլուխներով

ներկայացված են Պայաններին յուրաքանչյուր մանրամասն կենսագրությունն ու գործունեությունը, բերվում են նշանավոր գերդաստանի անդամների կերտած ճարտարապետական կորոզները, վեր է հանվում հուշարձանների արվեստագիտական ու պատմական արժեքը: Ժամանակագրական կարգով տրվում են Պայան ընտանիքի անվանի դեմեմբեր: Պայանների տոհմի սկզբնավորողն է համարվում Պալի Քալֆան (մահ. 1803 թ.), որը, ինչպես ցույց է տալիս Քուլալյանը, Պոլիս է գաղթել Կեսարիա Դերվանի գյուղին: Այնուհետև նշվում են Գրիգորի (1764—1831) ու Սենեֆերիմի (մահ. 1833) անունները, որոնք ոչ միայն ժառանգել են իրենց հոր մասնագիտությունը, այլև աչիք ընկել տաղանդով ու բազմաշխատ գործունեության համար արժանացել «ամիրայի» կոչմանը: Արվեստագետների երբորդ սերունդին Քուլալյանը անդրադարձել է ի դեմս Կարապետ Ամիրա Պայանի (1800—1866): Կարապետ Պայանի կենսագրությունն է հիշարժան է այսպիսի մի փաստ. հայտնի է, որ նա այցելել է Անիի ավերակները և մտփիկց ժանր-բացել հայկական ճարտարապետության տրդատյան ղեկի: Ծարտարապետի կյանքի այս ցրվածը վկայում է ոչ միայն ճախնյաց շինարվեստը նաեղանյու մտահոգությունը, այլև այն բան արժանվայն գեանատիյուն մասին (անհրաժեշտ է շնոտանալ, որ Կարապետ Պայանի աղբաժ ժամանակաշրջանում դեռևս չէին սկսվել Անիի պեղումներն ու ուսումնասիրությունը): Դույմա Բանչյի ճախագծողը լինելու համար արվեստի պատմության մեջ նա հայտնի է «Դույմա Բանչյի ճարտարապետ» անունով: Բոսֆորի նրաճանավոր նրապուրեներից մեկը հանդիսացող այս հուշարձանը մի ֆանի մասնաշենքից է նրաճանց յուրապատող պարտեզներից կազմված պալատական համալիր է: Պայտան ունի մուտքեր քե՛ր ցամաքի, և քե՛ր ծովի կողմից: Ցուրաֆանչյուր դատ գարդարված է ինճատիպ ֆանդակներով ու նախերով: Այն XIX դարի ամենակարևոր է այժմ էլ կանգուն մնացած կառույցներից մեկն է: Այս է մի ֆանի ուրիշ պայտանների կառուցմանն ու ձևավորմանը մասնակցել է Նիկողոս Բնի Պայանը: Հայր է որդի Պայանները ստեղծել են բարակկա ռեզով մի ճարտարապետական զույգաբոճոց, որն այսօր էլ հիացնում է դիտողներին: Ուշագրավ է, որ այս համալիրի մաս է կազմել Նիկողոս Բնի կառուցած բուրճական առափին բառուրներ, որն այրվել է անցյալ դարի 70-ական թվականներին:

Ըստ Բ. Քուլալյանի, Կարապետ ամիրան ճարտարապետական կրթությունն ստացել է տանը՝ մասնավոր ուսուցիչներից ու հորից, իսկ նրա յուր որդիները՝ Նիկողոս Բնի (1826—1858)։ Հակոբ Բնի (1837—1875), Սարգիս Բնի կամ «Պար» (1831—1899) և Սիմոն Բնի (1846—1894) սովորել են Փարիզի համալսարանում:

տասխան ուսումնական հաստատություններում՝ Սենթ-Բար կոլեջում, է՛բոլ Սենթրալի «Արվեստների ու արհեստների» բաժնում և Գեղեցիկ Արվեստների դպրոցում: Այստեղ հարկ է ավելացնել այն փաստը, որ Սիմոն Բնի ճարտարապետ լինելուց բացի, եղել է վարպետ ձևավորող և նկարիչ: Նրա աշխատանքն են հոր ու մեծ հոր (Կարապետ և Գրիգոր) կառուցած պալատների, մզկիթների պատերի և առաստաղների մանրանկարներն ու ջրաներկ պատկերները: Բ. Քուլալյանի տողերին պետք է ավելացնել, որ Սարգիս Պայանի մասին մեծ հարգանքով գրել է Հակոբ Պարոնյանը. «Այս տաղանդավոր անձնամենն ավելի երևելի ընդդեմ է այն անհավատալի արագությունն, որով հայկապ շենքեր կը կանգնեն»: «Քովով խիստ էին են մեր ազգին մեջ այսպես մարդեր, որոնք իրավամբ իրենց ազգին փառն ու պարծանեն են»: «Հակառակ այն պատվաճշաններուն, զորս յուր կուրծքին կախած են Անգղիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Քուրֆիայի, Ռուսիայի և այլն կառավարություններն՝ այսօր հայերեն կը խօսի և ազգին բնավ չարիք մը հասուցած չէ: Այսչափ պատվաճշաններով գարգարված մեկն յուր մայրենի լեզուն սիրե՛...»:

Հակոբ Պարոնյանի վկայությամբ Սարգիս Պայանը ճարտարապետ լինելուց բացի եղել է մեմբաների գյուտարար, բնագետ, էփմագետ, երգանան և հրաշալի դաշնակահար: Նա հորինող է «Արաֆաի արտասուր» երգի «տառաույ եղանակի», որը, Պարոնյանի խոսքերով ասած, «այսօր ամեն հայու բերանն է»։ Այս մասին հիշատակում է և Բ. Քուլալյանը: Նա նշում է, որ Սարգիս Պայանը հիզերանկ է նաև «Քրիստափոր Նյուտոն» օպերայի երաժշտության:

Պայանների վերջին սերունդի ներկայացուցիչն է Լևոն Բնի (1855—1925), որը նույնպես ուսում է ստացել Փարիզում ու աշխատել հորեղբոր՝ Սարգիս Պայանի մոտ: Դժբախտաբար Բ. Քուլալյանը չի նշում, քե՛ր որ հուշարձանների շինարարությանն է մասնակցել Լևոն Պայանը:

Քուլալյանի ուշագրությանն են արժանացել և Պայաններին տարբեր առիթներով աշխատակցած Հասի Միլտիչ Չարյանը, Սոփոն Պեղերյանը, Պետրոս Մրապյանը, Հովհաննես ամիրա Սերվերյանը, Պետրոս Նեմցյան, Միլտիչ Ճիվան:

1 Տե՛ս է. Պարոնյան, Երկերի ժողովածու, հատոր 2, Երևան, 1964, էջ 228—232: Առաջինը Ռուսիայի Պատկանյանն է հորինել իր բանաստեղծության երաժշտությունը: Արաքսի արտասուրի համար հետագայում եղանակ են գրել նաև ուրիշները: Այսօր «Արաքսի արտասուր» երգով է իտալական օպերայի հուշակավոր երգի Պետրոս Աֆրիկյանի (Պետրոս Սախնիբեյ) հորինած մեղեդիով (տե՛ս Գ. Հովհան, Մայր Արաքսի ափերով..., Եր., 1980, էջ 83—88):

յանը, Հովհաննես Աննյանը, Դավիթ Քրյանը և ուրիշներ<sup>2</sup>:

Այս գրքի առանձին վերատպաբանների միջոցով ծանոթանում ենք և աշխարհահռչակ ծավաղեցրիչ Հովհաննես Այվազովսկու գրքի անհայտ զուխագործոցներին, որոնք գաղափարում են տարբեր պալատների ներսը՝ որմնակալների ու ձեղճակալների տեսքով: Այվազովսկու նկարները կան և Փյոնտու կամ Փյուլուստու, Քյուրթիյու ու այլ պալատներում: Անհրաժեշտ է նշել, որ Այվազովսկուց նկարներ են եղել նաև Ջրազանի պալատում, բայց ինչպես նրա, այնպես էլ Ռեմբրանդտի և ուրիշ նկարիչների աշխատանքները մոխիր են դարձել 1910 թվականին պալատում ծագած հրդեհի ժամանակ: Այս կապակցությամբ հիշարժան է, որ Սարգիս Պալյանը ծավաղեցրիչները նրավորել է Քյուրթիյույում գտնվող իր տունը նրա Պալատում գտնված օրերին, և Այվազովսկին Սարգիս Քյուրթիյուի նկարի վրեժ էր առնել, որովհետև 1899 թ. գաղափարի են Քյուրթիյույում հյուրասենյակը:

Բ. Քուլալյանի գրքում մեծ տեղ է տրվել նաև Պալյանների կատարած ազգային, հասարակական և մշակութային գործունեությանը: Անվանի գեղարտատանի ներկայացուցիչները ջանք չեն խնայել իրենց ունեցած արտաճառումներն օգտագործելու ի նպատակ հայությանը: Նրանք կառուցել են եկեղեցիներ (Գումափքի Սբ. Աստվածածին, Պեղիկաբաշի Սբ. Աստվածածին, Սբ.

Հակոբ, Իրևան Սբ. Խաչ, Սբ. Իրուզդուրյուն, Սբ. Սարգիս, Սբ. Լուսավորիչ վանք և այլն), դպրոցներ (Պեղիկաբաշի Մաքրունյան եպիսկոպոսության, Սկյուտարի Ազգային ճեմարան, Դուրդեղեղի Արշակունյաց դպրոց), հիվանդանոցներ (Սբ. Փրկիչ հայկական հիվանդանոց) և այլն: Քուլալյանը հիշատակում է այն դեպքերը, երբ Պալյանները ձեռք են մեկնել կարոտյալ արվեստագետներին, գրողներին ու հասարակական գործիչներին, օգնել նյութապես կամ պետության առաջ միջնորդել նրանց համար: Հիշարժան է այն փաստը, որ անցյալ դարի վերջին Հակոբ Պալյանի տունը վերածվել էր արվեստի կենտրոնի, ուր հավաքվում էին բազմաթիվ նշանավոր գրողներ ու երաժիշտներ՝ Տիգրան Գուլալյանի գլխավորությամբ: Հակոբ Քյուլալյանին է պատկանում նրա նաև Պետրոս Լեմցեի միջոցով հայ Բարեփրոք բարոնի վերանաստաման պատիվը (1870 թ.): Հակոբ Պալյանը նաև կազմակերպիչներից է հայ լեզվի ազդեցիկ միայն:

Բ. Քուլալյանի գիրքը հրատարակված է շատ շփեղ, օժտված է գծագրերով, էսքիզներով, հատակագծերով, գունավոր և սև ու սպիտակ լուսանկարներով, որոնք գալիս են լրացնելու հեղինակի գրավոր նկարագրությունները կառույցների հարստագեոմետրիկ, քանակագիտական և գեղանկարչական հատկանիշների մասին:

Ուսումնասիրության վերջում գեոմեթրիկ լուսանկարները գաղափար են տալիս այն բոլոր պատմական իրադարձությունների, ժողովների ու բանախոսությունների մասին, որոնք կատարվել են Պալյանների կառուցած պալատներում:

Վերջացնելով Բ. Քուլալյանի գրքի ներկայացումը, անհրաժեշտ է նկատել, որ օսմանյան կայսրության մայրամասի հետ իսպառ չի վերանում Պալյանների գործունեությունը: Դժբախտաբար քիչ է ուսումնասիրված XX դարում նրանց հաջորդների պատմությունը: Հայտնի է, որ Պալյաններից մեկը շարունակել են պապերից ժառանգած արվեստը այլ երկրներում:

Բ. Քուլալյանի գիրքը Պալյան գեղարտատանին վերաբերող առաջին միակ և ամբողջական մեկագրությունն է: Այն կարևոր ավանդ է գաղթօջախներում ստեղծագործած հայ վարպետների ժառանգությունը ուսումնասիրելու գործում: Լուսանք, որ հեղինակը իր հետագա երկերում կշարունակի սկսած գործը և հայ արվեստագետության անդաստանը կհարստացնի Քուլալյանյան աշխատած մյուս անվանի արվեստագետներին նվիրված աշխատություններով:

Լ. ՉՈՒԳԱՆՉԱՆ  
Ա. ԱՆՆՅԱՆ

<sup>2</sup> Այս անձանց գործունեությունը ավելի հայտնի դարձնելու մասնագրքում անհրաժեշտ է հիշատակել, կկամենայինք ուշագրություն հրավիրել մի շարք ազգայնորեն զրոյացող, որոնք դուրս են մնացել Բ. Քուլալյանի տեսողությունից: Դիսասաններ, միաժամանակ և նկարիչներ Դավիթ Քրյանցի ու Հովհաննես Աննյանի մասին տե՛ս Դավիթ Քրյանց, «Հայրենիք», 1892, 9 հունվարի, թիվ 107, էջ 1, 10 հունվարի, թիվ 108, էջ 3—2: Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 1-ին, Երևան, 1974, էջ 269, հատ. 4, Երևան, 1978, էջ 228: Նկարիչներ Սոփոն Պեղիկյանի, Մկրտիչ Զիվանյանի և Պետրոս Սրապյանի մասին տե՛ս Ա. Չապանյան, Քրոնիկ, «Անահիտ», 1902, № 8, օգոստոս, էջ 183, Ռ. Նիժմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները, Եր., 1958, էջ 235—245: Օ. Avedissian, Peintres et sculpteurs arméniens. Le Caire, 1959, p. 399. Հակոբ Քյուլալյանի սիրած վարպետի՝ Կյուսեյ և ճարտարապետ Պետրոս Լեմցեի մասին տե՛ս Լուսանք, Արհեստավորի կյանքն, Լեմցե Պետրոս, «Հայրենիք», 1893, 13 հոկտեմբերի, թիվ 604, էջ 1—2: Այս հոդվածից հետևում է, որ Պետրոս Լեմցեն 1893 թ. արդեն կենդանի չէր, մինչդեռ Բ. Քուլալյանի գրքում (էջ 1) նշված է, որ նա մահացել է 1913 թ.: